ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի շնորհավորական ուղերձը Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակի կապակցությամբ

Հարգելի հայրենակիցներ,

Սեպտեմբերի 21-ին մեր երկիրը նշում է իր պետական գլխավոր տոնը՝ Անկախության օրը:

Ուղիղ 25 տարի առաջ, միավորվելով ազգային գաղափարների շուրջ, մեր ժողովուրդը միահամուռ եւ համախումբ, մասնակցեց համազգային հանրաքվեին եւ իր վճռորոշ ,,այո,,-ն ասաց՝ մեկընդմիշտ հաստատելով անկախ Հայաստան ունենալու իր կամքն ու վճռականությունը: Դրանով իսկ իրականացավ մեր պապերի ու նախապապերի դարավոր երազանքը: Հայաստանի Հանրապետությունն իր անկախ եւ հաստատուն տեղն ունեցավ համաշխարհային նորագույն պատմության մեջ:

Անկախ պետության վերածնունդը պատմության հրամայականն էր: Երբեք չհաշտվելով անկախ պետականության կորստի հետ եւ հերոսական պայքարի ու մեծ զոհողությունների գնով վերստեղծելով այն, մեր ժողովորդը դրսևորել է մեծագույն կամք ու հաստատակամություն:

Այդպիսի վճռականությամբ եւ միասնական ջանքերով այսօր ամենքս ի զորու ենք պահպանելու մեր անցած ճանապարհի ձեռքբերումները, օր-օրի դրանց հավելելով նորերը՝ ի շահ մեր պետականության ամրապնդման, մեր անկախ երկրի կայունության եւ խաղաղության հարատեւման:

Ի սրտե շնորհավորում եմ ամենքիս՝ Անկախության տոնի առթիվ: Անսահման բարիք, հաջողություններ, երջանիկ եւ լուսավոր ապագա մեր ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետությանը: